ԼԻԼԻԹ ԹՈՒՆՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հոդվածը նվիրված է 1970-ական թվականներին գրական դաշտ մտած վաղամեռիկ բանաստեղծ Սպարտակ Բակունցի գրական ուղու ուսումնասիրությանը: Նրա «Հայացքների պայքար» ժողովածուում ամփոփված բանաստեղծությունների քննությամբ, որոնք արտահայտում են հեղինակի հույզերն ու մտորումները, ապրումներն ու սպասելիքները, սերունդներին ուղղված պատգամները, փորձել ենք ամբողջացնել Սպարտակ Բակունցի ունեցած դերը գրական ընթացքի վրա, ինչպես նաև հետևել նրա գրարվեստի հասունացմանը:

Բանալի բառեր` Սպարտակ Բակունց, «Հայացքների պայքար», ոգևորություն, գոտեպնդվել, արիություն, կարոտ, մարդասիրական, գրարվեստ:

1970-ական թվականներին գրական սերնդի մեջ առանձնանում է Սպարտակ Բակունց անունով բանաստեղծը, որ գրական ճանաչման պիտի հասներ իր մահվանից հետո, քանզի խիստ պատասխանատու էր իր գրվածքների հանդեպ, կարծում էր, որ դեռ պետք է մշակել, վաղ է ներկայանալ ընթերցողին: Թեկուզ բոլորից գաղտնի, բայց նա գրում էր, և այդպիսով մասնակիցը դառնում Արցախյան շարժման խմորումներին, և երբ ժամանակի հեռավորությունից անդրադառնում ենք նրա գրվածքներին, նկատում ենք, թե Բակունցն ինչքան ճիշտ ու խորն է ըմբռնել մեր պատմության ամենաբարդ ժամանակահատվածներից մեկի իրադարձությունները, մեր դժբախտությունների պատճառը և Չարենցի նման ելքը տեսել բռունցքվելու մեջ:

Սպարտակ Բակունցը սերում է Բակունցների հայտնի տոհմից: «Ասում են, որ 1889 թվականին հայոց արծակի աստվածը հանգրվանել էր գորիսեցի Ստեփան Բակունցի հարկի տակ և դրանով բացատրում Ակսել Բակունցի լինելիության առեղծվածը: Խորապես համոզված ենք, որ բանաստեղծության անորսալի կապույտ թռչուններից մեկը 1955 թվականին անաղմուկ իր բույնն էր հյուսել վերիշենցի Սեդրակ Բակունցի հյուրընկալ օջախում»,- այսպես գեղեցիկ ու պատկերավոր է Սպարտակ Բակունց բանաստեղծի «լինելիության առեղծվածը» բացատրում բանասեր Քաջիկ Միքայելյանը[1]: Սկզբնական ու բարձրագույն կրթությունը ստանալուց հետո Ս. Բակունցն աշխատել է տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում: Ստեղծագործել սկսել է վաղ պատանեկան տարիներից, բայց դրանք չի պահպանել, անգամ հետագայում չի զբաղվել իր գրվածքների հրատարակմամբ: «Երևի ինքն իր նկատմամբ շատ պահանջկոտ է եղել և եղել է երիտասարդական փառասիրություններից հեռու:

Կամ էլ, ի՞նչ իմանաս, կյանքում եղել է տաղանդավոր մարդ, կարողացել է իրեն այնպես դրսևորել, որ օգնել է մարդկանց, թեթևացրել նրանց կյանքը և ստեղծագործությունը համարել է հավելյալ մի բան»[2]: Եվ այդ «հավելյալ մի

---

1 **Միքայելյան Ք.**, Խոսք հիշատակի, անտիպ:

2 **Բակունց Ս.**, Հայացքների պայքար, Ե., Նաիրի, 1993թ., 288 էջ, էջ 6 (Հ. Սահյանի «Երկու խոսք»):

բանն» էր, որ մեծ հպարտությամբ Սպարտակը կրեց մինչև 1992 թվականի օգոստոսի 8-ը, երբ թշնամու արկից մահացու վիրավորվեց դպրոցի բակում: Մինչև այդ շատերը չգիտեին, որ նա իր խոհերն ու զգացմունքները, հիացմունքներն ու հիասթափությունները հանձնում է սպիտակ թղթին:

Նրա մահից հետո եղբայրը՝Արմիկ Բակունցը, ձեռնամուխ եղավ վաղամեռիկ եղբոր՝ «արևի երես չտեսած» բանաստեղծությունների հրատարակմանը: «Սպարտակի գիրքը հրատարակելու ցանկություն իմ մեջ առաջացավ ինքնաբերաբար,- մի հարցազրույցի ժամանակ նշում է Ա. Բակունցը,- ճիշտ այն ժամանակ, երբ բժիշկները, արցունքոտված աչքերով կյանքի համար պայքարում պարտված դուրս գալով, ինձ Սպարտակի մոտ մի քանի րոպե մտնելու հնարավորություն տվեցին: Ես վճռեցի անել այն, ինչ Սպարտակը չհասցրեց և որին, հավանաբար, ձգտում էր...»: Այդ դժվարին, պատասխանատու և հաճելի գործին լծվում են նաև գրող, մանկագիր Երվանդ Պետրոսյանը՝որպես խմբագիր, և նկարիչ Նիկոլայ Մանուկյանը՝ Նիկոն: Ե. Պետրոսյանը, հիացած Սպարտակ Բակունցի անշփոթելի լեզվամտածողությամբ ու ոճով, իր խոսքում նշում է. «Ափսո՜ս, որ Սպարտակ Բակունցին չվիճակվեց տեսնել իր տպագրված գոնե անդրանիկ ժողովածուն, որ, ահա, լույս է ընծայվում՝ որպես բանաստեղծի հիշատակի հավերժացում, որպես նրա գրական ժառանգության անկորնչելի խտացում, որպես երախտիքի տուրք՝ նրա ապրած ճշմարիտ կյանքի ու գործի հանդեպ»[1]: Արմիկ Բակունցի խնդրանքով՝ «Հայացքների պայքար» ժողովածուի համար անկեղծ ու սրտաբուխ խոսք է գրում իր կյանքի մայրամուտն ապրող Հ. Սահյանը, որ Սպարտակի ռուսերեն բանաստեղծությունները լսել էր ռադիոյով. «... հաճելի է, որ նոր բանաստեղծի նոր ձայն ես լսում, մտնում ես բանաստեղծական մի նոր աշխարհ, և այդ աշխարհում գտնում ես քո ապրած կյանքի, քո մտքերի ու զգացմունքների փնտրված բանաձևումները: ..... Կարդա՛ այս գիրքը, սիրելի՛ ընթերցող, այնտեղ կգտնես մեր օրերի ողբերգության, դժվարությունների, հիասթափությունների և այդ բոլորը հաղթահարելու մեր ժողովրդի պատրաստակամության բանաստեղծական պատկերը...»[2]: Ժողովածուի մեջ ընդգրկված են Սպարտակ Բակունցի գրեթե բոլոր ստեղծագործությունները՝թե՛ իր իսկ ձեռքով ժամանակին խմբագրված, բանաստեղծական կատարելության հասցրածները, թե՛ շատ տարիներ առաջ գրված ու մտերիմներից թաքուն պահածները: Այդ բոլորն ընդգրկելը նպատակ չի ունեցել տուրք տալ ծավալին, ամենևին, այլ փորձել են ամբողջացնել Սպարտակ Բակունց բանաստեղծի կերպարը՝գրական առաջին քայլերից՝ 1972 թվականից (թեև հարազատները վկայում են, որ Սպարտակը գրել սկսել է վաղ պատանեկության տարիներին, սակայն այդ գործերը չի պահպանել) մինչև 1992 թվականը:

Սպարտակ Բակունցը ստեղծագործել է մոտ 2 տասնամյակ: Թե՛ արտահայտած գաղափարների, թե՛ գրելաձևի տեսակետից կարող ենք նրա ստեղծագործական կյանքը բաժանել 2 շրջանի՝առաջինը՝ 1972-ից 1982, երկրորդը՝1983-1992 թվականներն ընկած ժամանակահատվածը: Իսկ «Հայացքների պայքար» ժողովածուն բաղկացած է երեք շարքից՝ «Չլռող զանգեր», «Կյանքի կարոտ», «Գարնան անձրև»:

«Չլռող զանգեր» շարքում Սպարտակ Բակունցի ոգևորության ու պայ-

1 Նույն տեղում, էջ 9:
2 Նույն տեղում, էջ 7:

քարի, անցյալից դասեր քաղելու և ապագային բաց ճակատով նայելու խոհա-փիլիսոփայական գործերն են: Բանաստեղծը խոր ցավ է ապրում սեփական ժողովրդի անկարողության, առանց պայքարի հանձնվելու՝ նոր-նոր ձեռք բե-րած բնավորության, միշտ անհեթեթորեն օտարին ձգտելու մեր ցանկության պատճառով.

Մենք դարն ի վեր խաբվել,
Շռայլել ենք ծափեր,
Մենք տրվել ենք առանց ընդդիմության,
Որ սթափվենք մի օր,
Հոգու մաղձը թափենք
Ու ընդվզենք ընդդեմ անդիմության: («Հայացքների պայքար», էջ 12)

1980-ականներից գրական դաշտ մտած սերունդը փորձում էր ավելի հա-մարձակ լինել՝նորովի, գեղագիտական նոր չափանիշներով մեկնաբանելով հասարակական, քաղաքական, ազգային ցավերը: Բակունցն այդ շրջանում բարձրացնում է այնպիսի թեմաներ (թեև անտիպ), որոնք առաջին հայացքից անսովոր են հնչում, թվում է՝ շատ խիստ է արտահայտվել. դարերով մեր գի-տակցություն ներմուծած գաղափարները սի՞ն են, լույսի ու ճշմարտության հա-մար պայքարն անհեթե՞թ էր, հավատն էլ՝ ահի՞ց.

Մեր յոթերորդ մասից
Յոթ կաշի են քերթել,
Որ մեր հավատն ահից ամբողջանա... (էջ 13)

Էջ առ էջ բակունցյան դառը մտորումները խորանում են՝առանց լալկա-նության երանգի: Բանաստեղծի բողոքին միախառնված են հպարտության, անցյալի փառքի ու հերոսության ժառանգորդը լինելու զգացողությունևնե-ը՝այդպիսով ձգտելով հային նորից բռունցքվելու, պայքարելու ոգի ներշնչել.

Ո՛վ Հայկի դու թոռ,
Մաշտոցի զավակ.
Թե աչքերում՝ ցող
Ու սրտում կարոտ աշխարհում լինեն,
Ողջ աշխարհը Հայք,՝
Ու գետերն ամեն
Քո հավերժության ակունք չեն դառնա: (էջ 21)

Բանաստեղծի ասելիքը թանձրանում է, իրեն հատուկ ներքնատեսությամբ, բնազդով զգում է վերահաս պայքարի, ազատության, նաև ... պատերազմի շունչը և գոտեպնդվելու, պայքարելու, չհանձնվելու զուսպ ու ոգևորիչ կոչով դիմում հայրենակիցներին.

Գոտեպնդվե՛ք...
Ու հիշեցե՛ք.
Ընտությունը կատարել ենք
Դարեր առաջ:
Թող մեր կրծքից էլ չհնչի
Ո՛չ մի հառաչ,
Որ կմատնի խռովքը մեր
Արդար հոգու... (էջ 85)

Պատերազմի ձայներն արդեն լսելի էին, շատերն էլ իրենց մաշկի վրա զգացել էին նրա դառնությունները, և մարդկանց մեջ արիություն ու պատվախնդրություն ներարկած բանաստեղծը նորից դիմում է ժողովրդին՝ կոչ անելով պատմության դեմքին թողնել իր մատնահետքը.

Ո՛չ մի նահանջ,
Որ է՛ նորից նոր պարտություն: ... (էջ 85)

«Չլռող զանգերում» Բակունցը խորապես հավատում է հայի մշտանորոգ ոգուն, կառուցելու, միաբանվելու նրա ցանկությանն ու կարողությանը: Հայի ճակատագրի, անցած ճանապարհի, մեր հպարտությունների ու բնավորության այպանելի կողմերի յուրահատուկ մեկնաբանությունն է «Միասնություն» բանաստեղծությունը: Բանաստեղծն այդ բառի փիլիսոփայական ներքին շերտերը բացում-վերծանում է՝ ելնելով մեր անցած ճանապարհից, պատմությունից դասեր քաղելու անկարողությունից, մեր պապերի ու սերունդների առջև պարտական լինելուց, հավաքականության գաղափարն ու զգացողությունը չունենալուց...

Մ...Դա Մենքն է՝
Հավաքական մի դերանուն,
Մի «Ես»-արան,
Ամեն «Ես»-ին երկու երես,
Մեկը՝ տեղին, մեկն՝ ավելորդ,
Մեկը՝ մարմին ու մեկը՝ որդ:
Եվ որքան շատ «Ես» նրանում,
Այնքան շուտ է ցեցահարվում:
.....
Ա... Մեր Արդար դատն է անշուշտ,
Որ պաշտպանել
Մեզ այդպես էլ չի հաջողվում:
.....
Ն...Նորաթուխ մեր այրերն են,
Որ այրում են կամուրջները
Ու գետափին անրջում են
Նոր կամրջի գաղափարը: (էջ 91-92)

«Կյանքի կարոտ» շարքն առանձնանում է առավելապես փիլիսոփայական-քնարական շնչով: Շերտ առ շերտ խտանում, ամբողջանում է բանաստեղծի ապրած կյանքը. մանկության հուշ-ապրումները հանգիստ չեն տալիս, ժամանակներն էլ փոխվել են՝ ո՛չ մտածել են թողնում, ո՛չ զղջալ: Բանաստեղծն էլ բոլորի նման փոքրիկ խոստովանանք ունի.

Մանուկ օրերս անհոգ են եղել
Շատերի մանուկ օրերի նման:
Հասուն օրերս, ինչու, չգիտեմ,
Լցված են դառը, անլուր տրտմությամբ: (էջ 158)

Այս շարքում չենք տեսնում հայրենիքի ներկայի ու ապագայի համար խիստ մտահոգված բանաստեղծին, ինչպես «Չլռող զանգեր»-ում, այստեղ նրան հուզողը ժամանակի բարքերն ու մարդն են, մարդը, որ ստեղծեց ստոր ու քստմնելի բարքերն ու ինքն էլ զոհ գնաց դրանց:

Անառակ որդին է երդվում՝
Իր սուրբ մոր անարատ կաթով.
Էլ ինչո՞ւ զարմանալ, ինչի՞ց...
Տերն առատ համբույր է դրոշմում
Ծառայի շողոքորթ դնչին: (էջ 187)

Մարդուն այլևս չի հետաքրքրում դիմացինի տառապանքը, զլանում է անուշ խոսքով նրան ուրախացնել: Եվ այդ ամենի արդյունքում կորչում են իրականություն դառնալու հավատով լեցուն երազները, և մնում ես կյանքի, երազի կարոտ:

Օ՜, ինչքա՜ն, ինչքա՜ն փոքրիկ երազներ՝
Հույսերով լեցուն եկել են, անցել:
Նրանցից մեկը...օ՜, իմ երազն էր,
Գնաց, նրանից բան չի մնացել: (էջ 156)

Դառնացած բանաստեղծն ընդամենն իր համեստ օրինակով ցույց է տալիս, որ մեր գոյությամբ յուրաքանչյուրս մի լավ բան անելու պարտականություն ունենք. միգուցե հենց այդպես այս աշխարհի ծուռ ընթացքը կշտկվի:

Որքան էլ ապրեմ՝ դեռ էլի պարտք եմ.
Անցնողին պարտք եմ, դառնողին՝ պարտք...
Իմ ճանապարհը քարոտ, թե հարթ էր՝
Իմ լավն ու վատը նրան եմ պարտք... (էջ 134)

Այդ երանգը շարունակվում է շատ ստեղծագործություններում և իր գագաթնակետին հասնում որդուն նվիրված «Թոթովում ես դու դեռ» սկսվածքով բանաստեղծության մեջ: Բակունցը վստահ է, որ բամբասանքը, քծնանքը, շողոքորթությունը քաջ մարդկանց ուղեկիցը չեն, իսկ իր դեռևս թոթովախոս որդին մերժում է օտար ամեն ինչ՝ սկսած լեզվից մինչև բարքեր:

Քո ճշմարիտ կյանքով եղի՛ր դու միշտ հպարտ,
Կյանքին նայիր հույսով, նայիր շիտակ,
Թող պապանձվե՛ն քո դեմ, քո հայացքից անթարթ,
Չարի ամեն-ամեն գետ ու վտակ: (էջ 143)

Սպարտակ Բակունցի այդ շարքի «Ինձ իր գիրկն է կանչում ազատ» բանաստեղծությունը Դանիել Երաժիշտի նոտայագրմամբ դարձել է հիանալի երգ: Խոր ցավ, անդարձ հեռացումի տագնապ կա 18-ամյա երիտասարդի ներսում (բանաստեղծությունը գրվել է 1973թ.). դեռ կյանքի սեր ու կարոտ կա, մահվանը հանձնվելու ժամանակը չէ:

Ինձ իր գիրկն է կանչում ազատ
Գերեզմանս խուլ ձայնով,
Եվ ես, կյա՜նք իմ հարազատ,
Էլ չեմ ապրի քեզանով:
.....
... Մա՜հ, դեռ կյանք չեմ տեսել ես,
Էլ ո՞նց կյանքս հանձնեմ քեզ:
Լավ է՝ քիչ էլ սպասես,
Էլի մի քիչ համբերես:
Ա՜խ, դեռ սեր չեմ գտել ես.
Առանց սեր ո՞նց հանձնվեմ քեզ... (էջ 180)

Սպարտակ Բակունցի սերն ու սիրած աղջիկը գովերգող ու փառաբանող բանաստեղծությունները **«Գարնան անձրև»** շարքում են: Բակունցյան սերը կենարար է, հորդաբուխ, քնարական հերոսն առանց սեթևեթանքների արտահայտում է իր բուռն սերը և գոհ է երկնքից այդ զգացմունքի համար, սերն է համարում աշխարհի շարժիչ ուժը.

Արի միասին բարի խոսք ասենք սեր արարողին
Ու խոնարհ համբույր դրոշմենք նրա ճակատին վսեմ,
Հրդեհենք սերը, մի նոր էջ գրենք սիրո ներբողի
Ու նրա բոցում այրվենք-միանանք ճախրանքին լուսե: (էջ 208)

Չնայած անկեղծ ոգևորությանը՝ սիրո ճամփան էլ անհարթ չի եղել. Բակունցն էլ է զգում կորստի, մերժումի, մենակության դառնությունը, սակայն երբեք չի չարանում ո՛չ բախտի, ո՛չ սիրելիի վրա՝ այդ ծանր զգացողությունները կաղապարելով «Սիրել եմ, ատել չեմ կարող» խորը, մարդասիրական բանաձևումի մեջ: Եթե սիրո անուրջն արդեն կա, պետք է արարել այն:

«Գարնան անձրև» շարքում ընդգրկված են Սպարտակ Բակունցի՝ հիմնականում առաջին շրջանում գրված բանաստեղծությունները, որոնք թե՛ ձևի, թե՛ բովանդակության առումով զիջում են համեմատաբար ուշ ստեղծված գործերին, դրանց վրա զգացվում է այլ հեղինակների ազդեցությունը:

Գրականագիտության մեջ հաճախ է քննարկվել այն միտքը, որ «Սպարտակի պոետական ուսումնառությունն անցել է հատկապես Պարույր Սևակի, Համո Սահյանի պոեզիայի միջով»[1]: Կարդում ես Սպարտակ Բակունցի որոշ ստեղծագործություններ, թվում է՝ գաղափարների, երևույթների, անգամ արտահայտչաձևերի հեռավոր ինչ-որ նմանություն կա, ինչպես՝

Մենք այն ենք եղել,
Ինչ որ եղել ենք...
Արև ենք եղել
Ու մռայլվել ենք,
Անձրև ենք եղել
Ու շռայլվել ենք... (էջ 44)

Կամ՝

Երազի թևին թռչող գառ էի
Մի երազային հրաշք ավանում,
Բայց վայրէջքն, ավա՜ղ, այնքան դառն էր իմ,
Որ երազների էլ չեմ դավանում: (էջ 142)

Սակայն պետք է նկատել նաև, որ «ազդեցությունների, արձագանքների անողոք հորձանուտում նա իր ինքնությունն ու յուրահատուկ մտածողությունը բոլոր դեպքերում պահպանում է անուրանալի, աներկբայելի բացորոշությամբ»[2], և մեծ հաշվով այստեղ ազդեցությունների մասին խոսք լինել չի կարող, քանի որ բոլոր իսկական ու վավերական գրողների համար ազդեցության միակ դաշտը կյանքն է: Իսկ եթե խոսքը գրարվեստի մասին է, այստեղ կարևորվում է բանաստեղծական տարիքը, երբ գրողի գրիչը ժամանակի ընթացքում հասունանում, հյութավորվում, բյուրեղանում է: Սպարտակ Բակունցի մոտ նկատելի

1 **Միքայելյան Ք.**, Խոսք հիշատակի, անտիպ:
2 Նույն տեղում:

է բանաստեղծական կատարելության հասնելու, ժամանակի ընթացքում հնարավոր ազդեցություններից, կրկնություններից ազատվելու միտումը: Այսպես՝

Բացվում է ժանգոտ կափույրն իմ հոգու
Ու ազատվում է լեզուս կապանքից.
Անթեղված կայծն եմ ահա նորոգում՝
Հոգնել եմ արդեն լուռ տառապանքից: (էջ 54)

Եթե փորձենք ամփոփել Սպարտակ Բակունցի բանաստեղծական աշխարհի նկարագիրը, ապա ամենաբնորոշողն իր իսկ բանատողն է. «Ես լիճ սրտով՝ Անձրևաջուր իմ պարզությամբ»: Պարզ ու դիպուկ են նրա միտքն ու լեզուն՝ առանց ավելորդ պաճուճանքների, նա պարզ ու շիտակ է ընթերցողի և ինքն իր հետ:

Թեև ժամանակակիցներին անծանոթ էր Սպարտակ Բակունց բանաստեղծը (ընդամենը մի քանի անգամ ռադիոյով հնչել են նրա բանաստեղծությունները), ժամանակի մամուլում չեն հրապարակվել նրա բանաստեղծությունները, ստեղծագործել է երկու տասնամյակ և ընթերցողին է ներկայացել մեկ գրքով, սակայն նա մեր գրական դաշտի այն հեղինակներից է, որ Արցախյան հերոսամարտում կռիվ տվեց գրչով, իր արյունն էլ թափեց այդ զոհասեղանին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բակունց Ս., Հայացքների պայքար, Ե., Նաիրի, 1993թ., 288 էջ:
2. Միքայելյան Ք., Խոսք հիշատակի, անտիպ:

IN THE CREATIVE WORLD OF SPARTAK BAKUNTS - LILIT TUNYAN - The article is devoted to the study of the literary path of Spartak Bakunts: the poet died at an early age and entered the literary field in the 1970s.

In the collection of poems «The Struggle of Views», supplemented by the consideration of poems in which the author expresses emotions and thoughts, feelings and expectations, messages to the generation, the role of Spartak Bakunts in the literary process is being completed, and we are also following the maturity of his literary art.

Key words: Spartak Bakunts, ‘’The Struggle of Views’’, enthusiasm, encouragement, courage, longing, humanitarian, written art, altar.

В ТВОРЧЕСКОМ МИРЕ СПАРТАКА БАКУНЦА - ЛИЛИТ ТУНЯН - Статья посвящена изучению литературного пути Спартака Бакунца: поэт умер в раннем возрасте и поступил в литературное поле в 1970-х годах.

В сборнике стихотворений ‘’Борьба взглядов’’, дополненное рассмотрением стихов, в которых выражаются эмоции и мысли автора, чувства и ожидания, сообщения поколениям завершается роль Спартака Бакунца в литературном процессе, а также мы следуем к зрелости его литературного искусства.

Ключевые слова: Спартак Бакунц, ‘’Борьба взглядов’’, энтузиазм, поощрение, мужество, тоска, гуманитарный, письменное искусство, алтарь.